ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/239

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարանի
Մասնակից՝ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, Երևանի Ավան վարչական շրջանի համար գրասենյակային ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15183-2020 գրությամբ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 01.10.2020թ.-ի թիվ 01/61-19460 գրության հիման վրա, 06.10.2020թ.-ին «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 07.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/239 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 01.10.2020թ.-ի թիվ 01/61-19460 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արծրուն Ասակարյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Արծրուն Մակարյանը հրաժարվել է վերը նշված չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, առաջարկում եմ Ա/Ձ Արծրուն Մակարյանի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15183-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2020/239 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Երևանի Ավան վարչական շրջանի համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով 27.08.2020թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ն:

ii. «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը

որոշել է 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին:

iv. 04.09.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ օրացույցային օրը ներառյալ:

v. Պատվիրատուն, armeps.am համակարգի միջոցով, 10.09.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկվել է www.armeps.am կայքով Մասնակցին ընդունել պայմանագրի շնորհումը և կնքել ներկայացված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով պայմանագրի նախագիծը և սույն ծանուցումը ստանալուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները (GHEA GRAPALAT տառատեսակով՝ ֆոնտով), պայմանագրի և որակավորման ապահովումները (միակողմանի սահմանված տուժանքի ձևով), ինչպես նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում:

Միաժամանակ Մասնակցին տեղեկացվել է, որ նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

vi. «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի կողմից 26.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով պայմանագրի շնորհման ընդունումը մերժվել է:

vii. Հանձնաժողովի 29.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի կողմից 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով պայմանագրի շնորհման ընդունումը մերժվելու հանգամանքով պայմանավորված, վերջինս՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15183-2020 գրությամբ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է

որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի Ավան վարչական շրջանի համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով 27.08.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովի 03.09.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.7-րդ կետի համաձայն՝ 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: Պատվիրատուն, armeps.am համակարգի միջոցով, 10.09.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկվել է www.armeps.am կայքով Մասնակցին ընդունել պայմանագրի շնորհումը և կնքել ներկայացված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով պայմանագրի նախագիծը և սույն ծանուցումը ստանալուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները (GHEA GRAPALAT տառատեսակով՝ ֆոնտով), պայմանագրի և որակավորման ապահովումները (միակողմանի սահմանված տուժանքի ձևով), ինչպես նաև դրա ներկայացման գրությունը,

որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում: Սակայն «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի կողմից 26.09.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով պայմանագրի շնորհման ընդունումը մերժվել է: Հանձնաժողովի 29.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ի կողմից 11-րդ և 17-րդ չափաբաժինների մասով պայմանագրի շնորհման ընդունումը մերժվելու հանգամանքով պայմանավորված, վերջինս՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/185» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.10.2020թ.-ի թիվ 26/26-1/15183-2020 գրությամբ «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/239 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Արծրուն Մակարյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ